

Ֆինանսական օգնության ծրագրերի ամփոփում

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ նկարագրված են ֆինանսական օգնության ծրագրերը, որոնք հասանելի են չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդների համար, որոնք բավարարում են որոշակի պահանջներն ըստ եկամտի՝ Dignity Health-ի կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար վճարելու համար: Չապահովագրված հիվանդը դա այն անձն է, որը չունի բժշկական ապահովագրություն՝ չի օգտվում մասնավոր ապահովագրությունից կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրից, և որն իրավունք չունի փոխհատուցում ստանալու հիվանդանոցային հաշվի համար: Ոչ բավարար ապահովագրություն ունեցող հիվանդը, դա այն անձն է, որն ունի բժշկական ապահովագրություն, սակայն ունի բարձր հիվանդանոցային հաշիվներ, որոնք մասամբ փոխհատուցվում են ապահովագրական ընկերության կողմից:

Անվճար խնամք՝

• Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է մինչև 250%, դուք կարող եք անհատույց հիվանդանոցային ծառայությունները ստանալու իրավունք ունենալ:

Ջեղված խնամք

• Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 250-350%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեր հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև այն առավել մեծ հիփսավորված գումարը, որը կարող է վճարվել պետության կողմից, որը սովորաբար վճարվում է Medicare-ի կողմից նմանատիպ ծառայությունների համար:

• Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 350-500%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեր հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed)՝ Դաշնային օրենքով սահմանված գումար, որն արտացոլում է այն գումարը, որը փոխանցվում է հիվանդանոց մասնավոր ապահովագրական ընկերություններից և Medicare-ից (ներառյալ համավճարները և չփոխհատուցվող նվազեցման գումարները) անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար:

Եթե դուք մեր Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեք, ապա դուք պարտավորված չեք լինելու վճարել ավելին, քան ստորև նկարագրված կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed): Որակավորվելու դեպքում դուք կարող եք նաև առանց տուկոսագումարի ընդլայնված վճարման պլանի համար դիմել:

Դուք երբևիցե պարտավորված չեք լինելու կանխավճար կատարել կամ այլ վճարային մեխանիզմներից օգտվել՝ շտապ օգնություն ստանալու համար: Հիվանդանոցի Ֆինանսական օգնության քաղաքականության և ֆինանսական օգնության հայտասանների անվճար պատճենները հասանելի են

հիվանդանոցի ստորև նշված վեբ կայքում կամ մուտքի մոտ գտնվող ընդունման կետերում: (Հետևեք “Admitting” ընդունման կետ, կամ “Registration” գրանցման կետ, նշաններին): Այդ փաստաթղթերի պատճեններն ըստ պահանջի կարող են նաև փոստով ուղարկվել ձեզ, եթե զանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին ստորև նշված հեռախոսահամարով:

Traducción disponible: Այդ փաստաթղթերը կարող եք նաև ձեռք բերել իսպանական և այլ լեզուներով ձեր հիվանդանոցի վեբ կայքում, հիվանդանոցի ընդունման կետում կամ զանգահարելով հիվանդանոցի հեռախոսահամարով:

Dignity Health-ի Ֆինանսական խորհրդատուները կարող են պատասխանել ձեր հարցերին, տրամադրել տեղեկատվություն մեր ֆինանսական օգնության քաղաքականության մասին և օգնել ձեզ ֆինանսական օգնության համար դիմելու գործընթացին: Մեր աշխատակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունման կետում, որտեղ կարող եք զանգահարել նաև ստորև նշված հեռախոսահամարով:

Arroyo Grande Community Hospital 345 South Halcyon Road, Arroyo Grande, CA 93420

Ֆինանսական խորհրդատվության բաժին 805-489-4261 ext 4411 | **Ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667
www.dignityhealth.org/arroyo-grande/paymenthelp

French Hospital Medical Center 1911 Johnson Ave, San Luis Obispo, CA 93401

Ֆինանսական խորհրդատվության բաժին 805-542-6321 | **Ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667
www.dignityhealth.org/frenchhospital/paymenthelp

Marian Regional Medical Center 1400 East Church St, Santa Maria, CA 93454

Ֆինանսական խորհրդատվության բաժին 805-739-3541 | **Ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667 |
www.dignityhealth.org/arianregional/paymenthelp

St. John's Pleasant Valley Hospital 2309 Antonio Ave, Camarillo, CA 93010

Ֆինանսական խորհրդատվության բաժին 805-389-5616 | **Ֆինանսական ծառայությունների բաժին** 877-877-8345 |
www.dignityhealth.org/pleasantvalley/paymenthelp

St. John's Regional Medical Center 1600 North Rose Ave, Oxnard, CA 93030

Ֆինանսական խորհրդատվության բաժին 805-988-7109 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 877-877-8345
www.dignityhealth.org/stjohnsregional/paymenthelp